ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«31» օգոստոսի 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
2. Մանկավարժական խորհրդի կազմի ընտրություն:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. Մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրություն:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
4. Դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պլանի, տարիֆիկացիոն ցուցակի, դասաբաշխման քննարկում և հաստատում (կցվում է):
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
5. 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները և 2022-2023 ուսումնական տարվա խնդիրները:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
6. Դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանի քննարկում և հաստատում (կցվում է):
(զեկուցող՝ Ա. Անտոնյան)
7. Առարկայական մասնախմբի նախագահների, դասվար-դաստղեկների, ուսումնական կաբինետների վարիչների, արտադասարանական խմբակների ղեկավարների հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
8. Դպրոցում ներքին կարգապահական կանոնների քննարկում, հաստատում (կցվում է):
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
9. ԿԱՊԿՈՒ աշակերտների՝ դասապրոցեսին ներկա լինելու դասաժամերի քանակի և ուսուցչի կողմից օրվա պլանում այդ աշակերտների կրթության կազմակերպման վերաբերյալ նշում կատարելու մասին:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
10. Թեմատիկ գրավոր աշխատանքների թվաքանակի փոփոխության մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
11. Արտադասարանական խմբակների ծրագրերի քննարկման մասին:
(զեկուցող՝ Ա. Անտոնյան)
12. Օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ներդնում:
(զեկուցող Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Մանկավարժական խորհրդի կազմի ընտրության մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց կարգը, համապատասխան որի ընտրվում է հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի

կազմը։ Ըստ այդ կարգի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները, խորհրդի նախագահն ի պաշտոնե ուսումնական հաստատության տնօրենն է, ինչպես նաև խորհուրդն իր կազմից ընտրում է քարտուղար։

Արտահայտվեցին՝ Անդամներ

Մանկավարժական խորհրդի անդամները նշեցին, որ կազմի հետ կապված չունեն որևէ առարկություն։

Որոշեցին՝ Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմը.

1. Կոստանդյան Դավիթ
2. Ավանեսյան Սերգեյ
3. Անտոնյան Աիդա
4. Գևորգյան Արմիդա
5. Բաղդասարյան Նինա
6. Ալեքսանյան Ալվարդ
7. Քարամյան Մարետա
8. Հովսեփյան Արտուր
9. Հայրապետյան Ալեքսանդր
10. Գալստյան Նունե
11. Աղաբեկյան Անուշ
12. Մալխասյան Կարինե
13. Ավագյան Գայանե
14. Գրիգորյան Վարդ
15. Միքայելյան Ալինա
16. Փարսադանյան Տաթևիկ
17. Աղաբեկյան Անահիտ
18. Հարությունյան Արմինե
19. Ջավահիրյան Իրինա
20. Պողոսյան Կարինե
21. Դոլունց Արուս
22. Շալունց Ռիտա
23. Հարությունյան Սոնա
24. Սարգիսջանյան Անուշ
25. Հովսեփյան Շահանե
26. Սարգսյան Լիլիթ
27. Պետրոսյան Մարգարիտա
28. Գրիգորյան Ռիտա
29. Հայրապետյան Մարիամ
30. Բաղդասարյան Լուսինե
31. Հայրապետյան Անի
32. Գրիգորյան Լիանա
33. Դանիելյան Մերի
34. Խաչատրյան Ռուզաննա
35. Բակունց Արմանուշ
36. Ալավերդյան Հերմինե
37. Ջեյնալյան Ալլա
38. Բաղդասարյան Սիրուշ
39. Մարտիրոսյան Արփինե
40. Դաջունց Անուշ
41. Մկրտչյան Մերի
42. Յոլյան Մարինե
43. Արզումանյան Կարինե

44. Հարությունյան Մարետա
45. Արզումանյան Ռոբերտ
46. Աբգարյան Աննա
47. Միրզոյան Սոնա
48. Գրիգորյան Լուսինե
49. Հովհաննիսյան Թամարա
50. Տատինցյան Հասմիկ
51. Ղուլունց Օլյա
52. Ծատրյան Արփինե
53. Ակլունց Կարինե
54. Բաղդագյուլյան Նարինե
55. Քոչարյան Արաքսյա
56. Օհանյան Հասմիկ
57. Էլյազյան Անուշ
58. Շեգունց Կարինե
59. Ծնողական խորհրդի նախագահ

Լսեցին 3. Մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրության մասին հարցը։

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդ ուսումնական տարում մանկավարժական խորհրդի քարտուղարը Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման ուսուցչուհի Ալլա Զեյնալյանն է եղել, նշեց, որ, եթե Ալլա Զեյնալյանը չունի առարկություններ, ապա վերջինիս հնարավորություն տալ շարունակել մանկավարժական խորհրդի քարտուղարի աշխատանքը։

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ս. Ավանեսյանը։

Արտահայտվողները նույնպես առաջարկեցին թողնել անփոփոխ և հնարավորություն տալ Ալլա Զեյնալյանին շարունակել մանկավարժական խորհրդի քարտուղարի պարտականությունները։

Որոշեցին՝ Ալլա Զեյնալյանի թեկնածությունը կրկին հաստատել 2022-2023 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի քարտուղարի պաշտոնում։

Լսեցին 4. Դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պլանի, դասաբաշխման, տարիֆիկացիոն ցուցակի քննարկման և հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական տարվա պլանի և տարիֆիկացիոն ցուցակի համար հիմք են հանդիսացել տնօրենության, առարկայական մեթոդմիավորումների առաջարկությունները, նաև հաշվի են առնվել սահմանված համապատասխան պայմանների առկայությունը։

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Ն. Բաղդասարյանը, Ա. Դաջունցը, Մ. Դանիելյանը, Մ. Թոխունց

Արտահայտվողները նշեցին, որ իրենց առարկայական մեթոդմիավորումներում նախորդ ուսումնական տարվա ավարտին իրականացվել են նախնական ժամաբաժանումներ, որոնց համար հիմք են հանդիսացել հաստատված ուսումնական պլանները։ Հիմք ընդունելով նախնական ժամաբաժանումները 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար իրականացվել է ժամաբաժանում, որը քննարկվել և հավանության է արժանացել չորս մեթոդմիավորումների նիստերում։ Արտահայտվողները նաև խոսեցին դպրոցական բաղադրիչի մասին, նշեցին, որ մեթոդմիավորումներում քննարկվել է այդ հարցը և առաջարկվել է դպրոցական բաղադրիչը շարունակել տրամադրել այն առարկաներին, որոնց տրամադրվել է նախորդ տարի։

Արտահայտվողները խոսեցին նաև տարիֆիկացիոն ցուցակի մասին։

Հաշվապահ Մայրանուշ Թոխունցը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն պլանը, անդրադարձ կատարեց փոփոխություններին:

Որոշեցին՝ Հիմք ընդունելով տնօրենության, առարկայական մեթոդմիավորումների առաջարկությունները, հաշվի առնելով սահմանված համապատասխան պայմանների առկայությունը՝ մանկավարժական խորհուրդը որոշեց.

2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տարրական և հիմնական դպրոցների դասարաններում՝ ըստ ուսումնական և երաշխավորված առարկայացանկի առարկաների բաշխել հետևյալ կերպ.

- II դասարան-մաթեմատիկա դպր. բաղադրիչ 1ժ ուս. պլան 4ժ, ընդհ. 5ժ
- III դասարան-մայրենի դպր. բաղադրիչ 1ժ, ուս. պլան 8ժ, ընդհ. 9ժ
- III դասարան-մաթեմատիկա դպր. բաղադրիչ 1ժ, ուս. պլան 4ժ, ընդհ. 5ժ
- IV դասարան-մայրենի դպր. բաղադրիչ 1ժ, ուս. պլան 8ժ, ընդհ. 9ժ
- IV դասարան-մաթեմատիկա դպր. բաղադրիչ 1ժ, ուս. պլան 4ժ, ընդհ. 5ժ
- V դասարան-անգլերեն դպր. բաղադրիչ 2ժ, ուս. պլան 0ժ, ընդհ. 2ժ
- VI դասարան-անգլերեն դպր. բաղադրիչ 2ժ, ուս. պլան 0ժ, ընդհ. 2ժ
- VI դասարան-ազգ. երգ ու պար դպր. բաղադրիչ 0.5ժ, ուս. պլան 0ժ, ընդհ. 0.5ժ
- VII դասարան-անգլերեն դպր. բաղադրիչ 1.5ժ, ուս. պլան 0.5ժ, ընդհ. 2ժ
- VII դասարան-քիմիա դպր. բաղադրիչ 0.5ժ, ուս. պլան 1ժ, ընդհ. 1.5ժ
- VII դասարան-ազգ. երգ ու պար դպր. բաղադրիչ 0.5ժ, ուս. պլան 0ժ, ընդհ. 0.5ժ
- VIII դասարան -անգլերեն դպր. բաղադրիչ 2ժ, ուս. պլան 0ժ, ընդհ. 2ժ
- VIII դասարան-մաթեմատիկա(հանր) դպր. բաղադրիչ 0.5ժ, ուս. պլան 3ժ, ընդհ. 3.5ժ
- IX դասարան-անգլերեն դպր. բաղադրիչ2ժ, ուս. պլան 0ժ, ընդհ. 2ժ
- IX դասարան մաթեմատիկա(հանր) դպր. բաղադրիչ 0.5ժ, ուս. պլան 3ժ, ընդհ. 3.5ժ

2022-2023 ուսումնական տարվա համար ստեղծել տարիֆիկացիոն հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անվանական կազմը.

1. Կոստանդյան Դավիթ Սամվելի-տնօրեն
2. Ավանեսյան Սերգեյ Վլադիմիրի-փոխտնօրեն
3. Թոխունց Մայրանուշ Ռազմիկի-հաշվապահ
4. Հովսեփյան Արտուր Լազրի-արհմ. նախագահ
5. Պետրոսյան Մարգարիտա Էդուարդի-ուսուցիչ

Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասաբաշխումը:

Լսեցին 5. 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների և 2022-2023 ուսումնական տարվա խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդ ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները գոհացուցիչ էին: Տարածքային, մարզային և հանրապետական փուլերի օլիմպիադաներում ունեցել ենք արժանի մասնակիցներ և մրցանակակիրներ: Գոհացուցիչ են նաև գիտելիքների ստուգումների և ավարտական քննությունների արդյունքները: Արձանագրված հաջողությունների մոտ նկատվել են նաև թերություններ, որոնք պետք է շտկել, որոնց համար անհրաժեշտ է հետևողական և բարեխիղճ

աշխատանք:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Ն. Բաղդասարյանը, Ս. Ավանեսյանը, Ա. Անտոնյանը,

Ռ. Շալունց, Տարրական դասարանների ՄՄ նախագահ

Անհրաժեշտ է տարրական դպրոց-հիմնական դպրոց համագործակցությունը դնել բաձր հիմքերի վրա: Հիմնական դպրոց փոխադրվող աշակերտը միանգամից հանդիպում է մի շարք դժվարությունների: Ուսուցիչները պետք է ցուցաբերեն հանդուրժողականություն, սովորողների կարողությունների և հմտությունների համակողմանի ուսումնասիրման և բացահայտման նպատակով մշտապես կապ պահեն դասվարների հետ, ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կիրառեն դրանց նպաստող միջոցներ:

Ն. Բաղդասարյան, Օտար լեզուների ՄՄ նախագահ

Օտար լեզուների մեթոդմիավորումը նախորդ ուսումնական տարում պատշաճ կերպով կատարել է իր աշխատանքները: Առաջին կիսամյակում կրտսեր և հիմնական դպրոցում իրականացվել է ֆրանսերենի դրվածքի ուսումնասիրություն: Կատարվել են դասալսումներ, իրականացվել արդյունավետ քննարկումներ: Պարզվել է, որ ֆրանսերենի դրվածքը դպրոցում բավարար հիմքերի վրա է: Իհարկե, եղել են նաև թերություններ, որոնց շտկման նպատակով իրականացվել են նպատակաուղղված քայլեր:

Ս. Ավանեսյան, ուսումնական գծով փոխտնօրեն

Նախորդ ուսումնական տարում ուսումնական գործընթացը դպրոցում իրականացվել է պատշաճ կերպով: Դասալսումների արդյունքում հայտնի է դարձել, որ իրականացվում է չափորոշչահեն կրթություն և ապահովված է եռամակարդակ աշակերտակենտրոն ուսուցում: Կրթական համակարգի բարեփոխումները դրականորեն են ազդում ուսուցման գործընթացի վրա: Ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, ձեռք բերած գիտելիքների կայունությունը, մտքի ճկունությունը: Այս առումով շատ կարևոր է նաև մեթոդների կիրառությունը: Հիմնականում ուսուցիչները համադրում են ավանդական և նոր մեթոդներ, սակայն հատկանշականն այն է, որ այդ մեթոդների բազմազանությունը այնքան կարևոր չէ, որքան դրանք նպատակին ծառայեցնելը:

Սերգեյ Ավանեսյանն անդրադարձ կատարեց նաև մատենավարությանը, նշեց, որ ուսուցիչները պետք է էլեկտրոնային մատյաններում հետևողականորեն կատարեն ամենօրյա գնահատում, թույլ չտան, որ լինեն բացթողումներ, ինչպես նաև կարևորեց թեմատիկ պլանավորման և մատյանի օրացուցային համապատասխանությունը:

Ա. Անտոնյան, ՄԿԱ գծով փոխտնօրեն

Ուսումնական տարվա ընթացքում դպրոցում տեղի են ունեցել միջոցառումներ, մրցույթ-վիկտորինաներ: Սովորողները ակտիվ մասնակցություն են ունեցել համադպրոցական, տարածքային միջոցառումներին: Դպրոցում գործող արտադասարանական առարկայական, գեղարվեստական խմբակների մեծ մասը ծառայել են իրենց նպատակին, ունեցել են գործունեության հստակ ծրագիր:

Որոշեցին՝ Հանձնարարել տնօրենությանը և մասնախմբերի ղեկավարներին.

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում նկատի ունենալ զեկուցման մեջ և հարակից ելույթներում կատարած առաջարկությունները:
2. Դասի արդյունավետության բարձրացման նպատակով ուշադրություն դարձնել դասերի պլանավորմանը՝ հաշվի առնելով ծրագրային և չափորոշչային պահանջները:
3. Դասավանդման որակը և սովորողների առաջադիմությունը

բարձրացնելու նպատակով կիրառել նորագույն տեխնոլոգիաներ՝ կարևորելով ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների ճկուն և արդյունավետ համադրումը:

4. Հետևողականորեն իրականացնել մեթոդմիավորումների, արտադասարանական դաստիարակչական աշխատանքները:
5. Աշակերտներին ապահովել դասագրքերով, դասագրքերի վարձավճարների գանձումն իրականացնել սահմանված ժամկետում:
6. Իրականացնել ամենօրյա վերահսկողություն դասագրքերի հետ խնամքով վերաբերմունքին, ուշադրության կենտրոնում պահել ուսումնական գույքի, շենքի օգտագործման և պահպանման հարցերը:

Լսեցին 6. Դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Անտոնյան)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանը, առանձին անդրադարձ կատարեց պլանի կետերին:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամներ

Արտահայտվողներն առաջարկեցին հավանություն տալ 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանին և այն հրապարակել ի ցույց բոլորի:

Որոշեցին՝ Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանը և այն հրապարակել ի ցույց բոլորի:

Լսեցին 7. Առարկայական մասնախմբի նախագահների, դասվար-դասղեկների, ուսումնական կաբինետների վարիչների, արտադասարանական խմբակների ղեկավարների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում դպրոցի մասնախմբերի նախագահներ են եղել Մերի Դանիելյանը՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորում, Ռիտա Շալունցը՝ Տարրական դասարանների մեթոդմիավորում, Անուշ Դաջունցը՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորում, Նինա Բաղդասարյանը՝ Օտար լեզուների մեթոդմիավորում, առաջարկեց անփոփոխ թողնել Հումանիտար առարկաների, Տարրական դասարանների, Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորումների նախագահներին, իսկ Օտար լեզուների մեթոդմիավորման համար կազմակերպել նախագահի ընտրություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նինա Բաղդասարյանը գնում է վաստակած հանգստի:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Հայրապետյանը, Լ. Գրիգորյանը

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ ուսումնական տարվա ընթացքում առարկայական մասնախմբերի նախագահները պատշաճ կերպով իրականացրել են իրենց աշխատանքը: Լիանա Գրիգորյանը նշեց, որ Օտար լեզուների մեթոդմիավորման նիստում քննարկվել է նախագահի ընտրության հարցը և առաջարկվել է մանկավարժական խորհրդում Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահի համար առաջադրել Մարգարիտա Պետրոսյանի թեկնածությունը:

Որոշեցին՝

- Հաստատել մասնախմբերի նախագահներին՝
  1) Դանիելյան Մերի՝ Հումանիտար առարկաներ
  2) Պետրոսյան Մարգարիտա՝ Օտար լեզուներ
  3) Դաջունց Անուշ՝ Բնագիտամաթեմատիկական առարկաներ
  4) Շալունց Ռիտա՝ Տարրական դասարանների

- Հաստատել I-IX դասարանների դասվար-դասղեկների կազմը.
  1) Գալստյան Նունե Iᵃ
  2) Աղաբեկյան Անուշ Iᵇ
  3) Մալխասյան Կարինե Iᵍ
  4) Ավագյան Գայանե IIᵃ
  5) Գրիգորյան Վարդ IIᵇ
  6) Միքայելյան Ալինա IIᵍ
  7) Փարսադանյան Տաթևիկ IIIᵃ
  8) Աղաբեկյան Անահիտ IIIᵇ
  9) Հարությունյան Արմինե IIIᵍ
  10) Ջավահիրյան Իրինա IIIᵈ
  11) Պողոսյան Կարինե IVᵃ
  12) Դոլունց Արուս IVᵇ
  13) Շալունց Ռիտա IVᵍ
  14) Հովսեփյան Շահանե Vᵃ
  15) Հարությունյան Սոնա Vᵇ
  16) Դանիելյան Մերի Vᵍ
  17) Ջեյնալյան Ալլա VIᵃ
  18) Գրիգորյան Լիանա VIᵇ
  19) Սարգիսջանյան Անուշ VIᵍ
  20) Աբգարյան Աննա VIIᵃ
  21) Պետրոսյան Մարգարիտա VIIᵇ
  22) Բաղդասարյան Լուսինե VIIIᵃ
  23) Բաղդասարյան Սիրուշ VIIIᵇ
  24) Հայրապետյան Անի VIIIᵍ
  25) Մարտիրոսյան Արփինե IXᵃ
  26) Մկրտչյան Մերի IXᵇ
- Հաստատել արտադասարանական խմբակների ղեկավարներին.
  1) Ավանեսյան Սերգեյ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Մասնագիտական կողմնորոշման ակումբ»
  2) Սարգիսջանյան Անուշ «Պատանի լեզվաբան»
  3) Հայրապետյան Անի «Խոսենք ֆրանսերեն»
  4) Գրիգորյան Լիանա «ABC»
  5) Բակունց Արմանուշ «Պատանի ֆիզիկոս»
  6) Դաջունց Անուշ «Պատանի քիմիկոս»
  7) Յոլյան Մարինե «Առողջ ապրելակերպ»
  8) Արզումանյան Կարինե «Հմուտ ձեռքեր» աղջիկներ
  9) Հարությունյան Մարետա «Հմուտ ձեռքեր» տղաներ
  10) Աբգարյան Աննա «Ատլետիկա»
  11) Միրզոյան Սոնա «Արվեստը իմ աչքերով»
  12) Գրիգորյան Լուսինե «Պարենք ազգովի»
  13) Հովհաննիսյան Թամարա «Երաժշտությունը իմ հոգու հայելին է»
  14) Տատինցյան Հասմիկ «Բոլորս հավասար ենք»
  15) Ծատրյան Արփինե «Բոլորս հավասար ենք»
  16) Ակլունց Կարինե «Բոլորս հավասար ենք»
  17) Ղուլունց Օլյա «Բոլորս հավասար ենք»
  18) Էլյազյան Անուշ «Բոլորս հավասար ենք»
  19) Բաղդագյուլյան Նարինե «Բոլորս հավասար ենք»
  20) Օհանյան Հասմիկ «Բոլորս հավասար ենք»
  21) Քոչարյան Արաքսյա «Բոլորս հավասար ենք»
  22) Երիցյան Արշալույս «Թռիչքի թևերով»
- Հաստատել ուսումնական կաբինետների, լաբորատորիաների,

արհեստանոցի վարիչների ցանկը.

1) Խաչատրյան Ռուզաննա՝ պատմության կաբինետ
2) Գրիգորյան Լիանա՝ անգլերենի կաբինետ
3) Յոլյան Մարինե՝ կենսաբանության կաբինետ
4) Զեյնալյան Ալլա՝ մաթեմատիկայի կաբինետ
5) Հարությունյան Մարետա՝ արհեստանոց
6) Արզումանյան Կարինե՝ տեխնոլոգիայի կաբինետ
7) Դաջունց Անուշ՝ քիմիայի լաբորատորիա
8) Ալեքսանյան Ալվարդ՝ ֆիզիկայի լաբորատորիա

Լսեցին 8. Դպրոցում ներքին կարգապահական կանոնների քննարկման, հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում դպրոցի ներքին կարգապահական կանոններում իրականացվել են փոփոխություններ, որոնց համապատասխան դրանում ավելացվել է COVID-19 հետ կապված որոշ կարգավորումներ։ Զեկուցողն առաջարկեց կիրառվող ներքին կարգապահական կանոնները թողնել անփոփոխ։

Զեկուցողն առանձին անդրադարձ կատարեց նաև դպրոցի աշխատանքային կանոնակարգին և առաջարկեց առանձին քվեարկել դպրոցի աշխատանքային ռեժիմի մասին հարցը։

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Մ. Հարությունյանը, Կ. Շեգունցը

Արտահայտվողներն առաջարկեցին անփոփոխ թողնել դպրոցի ներքին կարգապահական կանոնները, ինչպես նաև դպրոցի աշխատանքային ռեժիմը։

Որոշեցին՝

1) Շարունակել առաջնորդվել նախորդ ուսումնական տարվա ներքին կարգապահական կանոններով։
2) Հաստատել տնօրենության կողմից ներկայացված հետևյալ աշխատանքային կանոնակարգը.
   - ուսումնական պարապմունքները I-IX դասարաններում անցկացնել հնգօրյա,
   - ուսումնական պարապմունքները սկսել 8:30-ին, ավարտել 14:35-ին,
   - դասերի միջև ընդմիջումները սահմանել 5 րոպե, իսկ երկար դասամիջոցների տևողությունը՝ 15 րոպե (տարրական դասարաններում տաք սննդի տրամադրումն ապահովելու նպատակով)։

Լսեցին 9. ԿԱՊԿՈՒ աշակերտների՝ դասապրոցեսին ներկա լինելու դասաժամերի քանակի և ուսուցչի կողմից օրվա պլանում այդ աշակերտների կրթության կազմակերպման վերաբերյալ նշում կատարելու մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա մեկնարկին դպրոցն ունի 16 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որոնց հետ աշխատանքն անհրաժեշտ է իրականացնել հատուկ սահմանված կարգով։ Զեկուցողն առանձին-առանձին անդրադարձ կատարեց բոլոր աշակերտներին և նշեց նրանց հետ իրականացվող աշխատանքների գրաֆիկը։

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյան, Հ. Ալավերդյանը

Արտահայտվողները նշեցին, որ դպրոցում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքները միշտ պատշաճ են իրականացվել ու նախորդ ուսումնական տարին էլ բացառություն չէ։ Առանձնահատուկ անդրադարձ կատարեցին ծանր խնդրով աշակերտներին, որոնց հետ աշխատանքն առանձնահատուկ հմտություններ են պահանջում։

Որոշեցին՝ Սահմանել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 16 երեխա չեն մասնակցի լրիվ դասաժամերին և նրանց համար սահմանվում է հետևյալ ռեժիմը.

1) Ավոյան Մերի Շիրազի- 2-րդ Բ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) միջին
2) Բալասանյան Արփի Հարութի- 2-րդ Գ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) միջին
3) Խաչյան Լեո Սարգիսի- 3-րդ Բ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) ծանր
4) Տատինցյան Արեն Ալեքսանդրի- 3-րդ Գ դաս., 3-4 ժամ, տեսողական թերթ
5) Հարությունյան Տիգրան Արթուրի- 3-րդ Դ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) ծանր
6) Իսունց Էլեն Արենի- 5-րդ Ա դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) միջին
7) Դաղունց Ալեն Հենրիկի-5-րդ Բ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) ծանր
8) Առաքելյան Կարեն Դավիթի-5-րդ Գ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) միջին
9) Միրզոյան Գոռ Վլադիկի-5-րդ Գ դաս., 3-4 ժամ, լսողական ծանր
10) Սարգսյան Նարե Նորայրի- 6-րդ Ա դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) ծանր
11) Սահակյան Ալեքս Լավրենտի- 6-րդ Բ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) միջին
12) Ստեփանյան Էդիկ Գագիկի- 6-րդ Գ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) միջին
13) Ալումյան Արթուր Էրիկի- 6-րդ Գ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) միջին
14) Ծատրյան Լիլիթ Անդրանիկի- 8-րդ Գ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) միջին
15) Մինասյան Վահե Վանյայի-9-րդ Ա դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) ծանր
16) Զաղայան Եվա Գոռի- 9-րդ Բ դաս., 3-4 ժամ, ինտելեկտուալ (մտավոր) ծանր

Լսեցին 10. Թեմատիկ գրավոր աշխատանքների թվաքանակի փոփոխության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում բացառությամբ Տարրական դասարանների մեթոդմիավորման մեջ ընդգրկված «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաների հետ կապված փոփոխության, այլ մեթոդմիավորումներում ըստ առարկաների թեմատիկ գրավոր աշխատանքների թվաքանակի փոփոխություն նախատեսված չէ: Իսկ վերոնշյալ առարկաների հետ կապված փոփոխությունները քննարկվել են ՄՄ նիստի ընթացքում և հավանության են արժանացել: Զեկուցողն առաջարկեց փոփոխությունը կատարել և ԹԳԱ-ները հաստատել հետևյալ կերպ.

Առաջին կիսամյակ

- Մայրենի՝ 2-րդ դասարաններ-4 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 2-րդ դասարաններ-4 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մայրենի՝ 3-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 3-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մայրենի՝ 4-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք

- Մաթեմատիկա՝ 4-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք

Երկրորդ կիսամյակ

- Մայրենի՝ 2-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 2-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մայրենի՝ 3-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 3-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մայրենի՝ 4-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 4-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Գ. Ավագյանը, Ի. Ջավահիրյանը

Արտահայտվողները նշեցին, որ փոփոխություններն առաջարկվել են տվյալ դասարաններում դասավանդող դասվարների կողմից, քննարկվել են մասնախմբի նիստում և արժանացել են հավանության։

Որոշեցին՝ 2022-2023 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում տարրական դասարաններում թեմատիկ գրավոր աշխատանքների քանակը փոփոխել և սահմանել.

Առաջին կիսամյակ

- Մայրենի՝ 2-րդ դասարաններ-4 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 2-րդ դասարաններ-4 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մայրենի՝ 3-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 3-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մայրենի՝ 4-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 4-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք

Երկրորդ կիսամյակ

- Մայրենի՝ 2-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 2-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մայրենի՝ 3-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 3-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մայրենի՝ 4-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք
- Մաթեմատիկա՝ 4-րդ դասարաններ-5 թեմատիկ գրավոր աշխատանք

Լսեցին 11. Արտադասարանական խմբակների ծրագրերի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Անտոնյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի առաջարկությամբ 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում արդեն իսկ արտադասարանական խմբակների համար կազմվել են ծրագրեր և դրանք հաստատվել են տնօրենի կողմից։ Առաջարկեց այդ նույն ծրագրերում կատարել որոշ փոփոխություններ, արդիականացնել և ուղարկել ԿԳՄՍ՝ երաշխավորության նպատակով։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ նախորդ ուսումնական տարվա ընթացքում իր կողմից առաջարկվել և հավանության արժանացել արտադասարանական խմբակների համար ծրագրերի կազմման մասին հարցը։ Խմբավարների կողմից կազմվել են համապատասխան խմբակների ծրագրերը, քննարկվել առարկայական մասնախմբերում, հավանության արժանացել ու հաստատվել մանկավարժական խորհրդի նիստում։ Արտահայտվողը նշեց, որ հաստատված խմբակի ծրագրերում անհրաժեշտ է կատարել որոնոշակի փոփոխություններ, որպեսզի դրանք համապատասխանեն ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված համապատասխան կարգի պահանջներին և ուղարկել ԿԳՄՍ՝ երաշխավորության նպատակով։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել ներքոնշյալ արտադասարանական խմբակների ծրագրերը և ուղարկել ԿԳՄՍ նախարարություն՝ երաշխավորության նպատակով.

№	ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ
1	Անգլերեն	Step by Step	Գրիգորյան Լիանա
2	Մայրենի, Մաթեմատիկա, Բնագիտություն	Բոլորը հավասար են	Ծատրյան Արփինե
3	Հայ գրականություն	Թռիչքի թևեր	Երիցյան Արշալույս
4	Ֆրանսերեն	Parlons français	Հայրապետյան Անի
5	Ազգային երգ ու պար	Տարբեր ազգերի պարեր	Գրիգորյան Լուսինե
6	Տեխնոլոգիա (աղջիկներ)	Ֆուրշեթ: Դերձակի մասնագիտական հիմունքներ	Արզումանյան Կարինե
7	Տեխնոլոգիա (տղաներ)	Գծագրություն, թույլտվածքներ և նստեցվածքներ, մակերևույթների անհարթություններ	Հարությունյան Մարետա
8	Քիմիա	Պատանի քիմիկոս	Դաջունց Անուշ
9	Ֆիզիկա	Հետաքրքրաշարժ ֆիզիկա	Բակունց Արմանուշ
10	Ինֆորմատիկա	WEB տեխնոլոգիա	Ավանեսյան Սերգեյ
11	Ինֆորմատիկա	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Ավանեսյան Սերգեյ
12	Ֆիզկուլտուրա	Աթլետիկայի պատմության և տարբեր վազքաձևերի ուսուցում	Աբգարյան Աննա
13	Երաժշտություն	Երաժշտություն՝ հոգու հայելին է	Հովհաննիսյան Թամարա
14	Կերպարվեստ	Արվեստը՝ քո աչքերով	Միրզոյան Սոնա

Լսեցին 12. Օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ներդնում:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողն առաջարկեց 2022-2023 ուսումնական տարվանից ներդնել օրվա դասի պլանները (այսուհետ՝ ՕԴՊ), դրանք լրացնել բացառապես էլեկտրոնային տարբերակով: Զեկուցողն առաջարկեց նաև 2022-2023 ուսումնական տարվանից սկսած ՕԴՊ-ները պարտադիր դարձնել բոլոր ուսուցիչների համար, անկախ նրանց աշխատանքային գործունեության տևողությունից:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ա. Աբգարյանը:

Արտահայտվողները ողջունեցին զեկուցողի առաջարկը, նշեցին, որ ներկայացված ՕԴՊ-ի տարբերակը հարմար է և ուսուցչի համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի ստեղծի, հատկապես այն դեպքում, երբ ՕԴՊ-ները կլրացվեն էլեկտրոնային տարբերակով, այդ տարբերակով նույնպես կարխիվացվեն և հետագայում կիրառության ժամանակ և դրանում փոփոխություններ կատարելու դեպքում դժվարություններ չեն լինի:

Որոշեցին՝ 2022-2023 ուսումնական տարվանից ներդնել ՕԴՊ, դրանք լրացնել բացառապես էլեկտրոնային տարբերակով: 2022-2023 ուսումնական տարվանից սկսած ՕԴՊ-ները պարտադիր են բոլոր ուսուցիչների համար, անկախ նրանց աշխատանքային գործունեության տևողությունից:

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«05» սեպտեմբեր 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
2. Դպրոցի 2021-2022 ուստարվա ներքին գնահատման հաշվետվության ներկայացում:
(զեկուցող՝ Մ. Մկրտչյան)
3. Ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքեր հատկացնելու մասին:
(զեկուցող՝ Կ. Շեգունց)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:
Արտահայտվեցին՝
Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Դպրոցի 2021-2022 ուստարվա ներքին գնահատման հաշվետվության ներկայացման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Մկրտչյան)
Զեկուցողը ներկայացրեց, որ հաստատության գործունեության ներքին գնահատման նպատակն է՝ բարելավել հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և բարձրացնել արդյունավետությունը կամ, այլ կերպ ասած, նպաստել ուսումնական հաստատության գործունեության հետագա բարելավմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և սովորողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով:
Արտահայտվեցին՝ Ա. Գևորգյանը
Ա. Գևորգյանը նշեց, որ մանրամասնորեն գրի է առնվել ու ներկայացվել դպրոցի ներքին գնահատումը, շեշտեց, որ հանձնաժողովի կողմից կատարվել է ծավալուն աշխատանք:
Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2021-2022 ուստարվա ներքին գնահատման հաշվետվությունը:

Լսեցին 3. Ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքեր հատկացնելու մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը նշեց, որ ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքեր հատկացնելու համար հաշվի են առնվել աշակերտների ընտանիքների ընտանիքի անապահովության միավորը, միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ լինելու հանգամանքը:
Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Գևորգյանը
Արտահայտվողները նշեցին, դասվարների ու դասղեկների հետ համագործակցությամբ դուրս են բերվել դպրոցի ծնողազուրկ, սոցիալապես անապահով ընտանիքիների երեխաների տվյալները, մանրամասն քննարկվել

են և մշակված հատուկ սանդղակի համաձայն որոշվել է վերջնական ցանկը։

Որոշեցին՝ Ներքոնշյալ ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաներին հատկացնել անվճար դասագրքեր.

	Ազգանուն	անուն	հայրանուն	դասարան	գումարի չափը (դրամ)
1.	Դավթյան	Ալեն	Վրեժի	$V^{ա}$	3460
2.	Բազունց	Իշխան	Գագիկի	$V^{ա}$	3460
3.	Ղահրամանյան	Նարե	Վահեի	$V^{ա}$	1730
4.	Իսունց	Էլեն	Արենի	$V^{ա}$	3460
5.	Ղուշուց	Տիգրան	Գեղամի	$V^{բ}$	3460
6.	Մաթևոսյան	Արինե	Էդգարի	$V^{բ}$	3460
7.	Արզումանյան	Կատրին	Արշակի	$V^{բ}$	1730
8.	Դաղունց	Ալեն	Հենրիկի	$V^{բ}$	3460
9.	Ավագյան	Շանթ	Գագիկի	$V^{բ}$	3460
10.	Ջավադյան	Ալբերտ	Աշոտի	$V^{գ}$	3460
11.	Միրզոյան	Գոռ	Վլադիկի	$V^{գ}$	3460
12.	Առաքելյան	Կարեն	Դավիթի	$V^{գ}$	3460
13.	Բաղդասարյան	Էլիզա	Արթուրի	$V^{գ}$	3460
14.	Մալիցյան	Ավետ	Արամի	$VI^{ա}$	2460
15.	Արզումանյան	Արման	Արայի	$VI^{ա}$	2460
16.	Սարգսյան	Նարե	Նորայրի	$VI^{ա}$	4920
17.	Մարտիրոսյան	Աննա	Յուրիկի	$VI^{բ}$	4920
18.	Հարությունյան	Սիրանուշ	Մայիսի	$VI^{բ}$	4920
19.	Այվազյան	Մարիամ	Ալիկի	$VI^{բ}$	2460
20.	Ճաղարյան	Արկադյա	Գարիկի	$VI^{գ}$	4920
21.	Ալումյան	Արթուր	Էրիկի	$VI^{գ}$	4920
22.	Ստեփանյան	Էդիկ	Գագիկի	$VI^{գ}$	4920
23.	Ալավերդյան	Գոհար	Աշոտի	$VII^{ա}$	6770
24.	Աթասունց	Տրդատ	Վարդանի	$VII^{ա}$	3385
25.	Աղաբեկյան	Էլինա	Գարունի	$VII^{բ}$	6770
26.	Տատինցյան	Էլինա	Նորայրի	$VII^{բ}$	6770
27.	Համբարձումյան	Թեհմինե	Արմանի	$VII^{բ}$	6770
28.	Ստեփանյան	Սյունե	Վրույրի	$VIII^{ա}$	6870
29.	Ավագյան	Արմեն	Հովսեփի	$VIII^{բ}$	6870
30.	Պետրոսյան	Մոնիկա	Սևակի	$VIII^{բ}$	6870
31.	Հովհաննիսյան	Արթուր	Արտյոմի	$VIII^{բ}$	6870
32.	Հարությունյան	Սյուզաննա	Արթուրի	$VIII^{գ}$	6870
33.	Մաթևոսյան	Գոռ	Էդգարի	$VIII^{գ}$	6870
34.	Ծատրյան	Լիլիթ	Անդրանիկի	$VIII^{գ}$	6870
35.	Բաբայան	Ալիկ	Արամայիսի	$IX^{ա}$	6990
36.	Մինասյյան	Վահե	Վանյայի	$IX^{ա}$	6990
37.	Միլանյան	Էրիկ	Հրանտիկի	$IX^{ա}$	6990
38.	Օհանջանյան	Էրիկ	Էդգարի	$IX^{ա}$	6990
39.	Կարապետյան	Լուսինե	Ալբերտի	$IX^{ա}$	6990
40.	Գյուրջյան	Ռոման	Ռուբենի	$IX^{ա}$	6990
41.	Զադայան	Եվա	Գոռի	$IX^{բ}$	6990
42.	Մալինցյան	Մոնիկա	Սերյոժայի	$IX^{բ}$	6990

Խորհրդի նախագահ՝ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ Ա. Զեյնալյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«07» նոյեմբերի 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
2. 3-9-րդ դասարաններում «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. 7-9-րդ դասարաններում «Ֆիզիկա» առարկայից չափորոշչային պահանջների իրականացումը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. 2023թ. բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Թոխունց)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:
Արտահայտվեցին՝
Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 3-9-րդ դասարաններում «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքի մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը նշեց, որ ՄՄ նիստի ժամանակ քննարկվել և հավանության է արժանացել 3-9-րդ դասարաններում «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրության մասին հարցը: Առաջարկեց հաջորդող ժամանակահատվածում իրականացնել առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրություն 3-9-րդ դասարաններում:
Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը
Արտահայտվողը նշեց, որ տեղին է համարում «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրությունը, հավելելով, որ նախորդ ուսումնական տարվա ընթացքում նույնպես իրականացվել է տվյալ առարկայի դրվածքի ուսումնասիրություն, սակայն օբյեկտիվ պատճառներով հնարավոր չի եղել դիտարկել ամբողջ պատկերը:
Որոշեցին՝ Ուսումնասիրել «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքը 3-9-րդ դասարաններում:

Լսեցին 3. 7-9-րդ դասարաններում «Ֆիզիկա» առարկայից չափորոշչային պահանջների իրականացման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը նշեց, որ դպրոցում «Ֆիզիկա» առարկան բավարար հիմքերի վրա է: Հավելեց, որ դասալսումները ցույց են տվել, որ ուսուցիչը դասը վարում է՝ հենվելով չափորոշչային պահանջների վրա: Դպրոցում գործող լաբորատորիան հնարավորություն է ընձեռնում տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ձևավորմանը: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել դասապրոցեսին աշակերտների ընդգրկվածության աստիճանին, կիրառել ժամանակակից մեթոդներ:

Զեկուցողը նշեց նաև, պարբերաբար իրականացվում են դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվում են ուսուցչուհի Արմանուշ Բակունցի հետ, հավելեց, որ ուսուցչուհու մոտ նկատելի է մանկավարժական փորձի պակասը, սակայն ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում պարզ է դառնում, որ դրական փոփոխություններն ակնհայտ են:

Արտահայտվեցին՝ Ա. Բակունց

Արտահայտվողը նշեց, որ ֆիզիկան զարգացնում է սովորողների տրամաբանական մտածողությունը: Ցավով նշեց, որ ժամանակին զուգընթաց նվազում է սովորողների հետաքրքրությունը «Ֆիզիկա» առարկայի նկատմամբ: Հավելեց, որ որոշ աշակերտների մոտ հիմնականում թերի են տրամաբանական մտածողությունը, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունները: Որոշ աշակերտներ դժվարանում են պարզ մաթեմատիկական հաշվարկներ կատարել: Այս ամենը խոչընդոտում է դասի որակի բարձրացմանը: Ըստ արտահայտվողի, այս աշակերտների կողքին կան նաև աշակերտներ, որոնք հեշտությամբ են կիրառում տեսությունը գործնականում՝ խնդիրների լուծման ժամանակ, սեր և հետաքրքրություն ունեն առարկայի նկատմամբ:

Որոշեցին՝

1. Բարձրացնել ֆիզիկա առարկայի դասավանդման արդյունավետությունն ու որակը, իրականացնել չափորոշչահեն կրթություն:
2. Մեծ ուշադրություն դարձնել դասի պլանավորմանը, հաշվի առնել չափորոշչային և ծրագրային պահանջները:
3. Ուսուցման գործընթացում կարևորել ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառմանը: Դասերը դարձնել հետաքրքիր, արդյունավետ, սովորողների մոտ ձևավորել որոշակի սոցիալական և գործնական հմտություններ, կարողություններ և արժեքներ:
4. Լաբորատոր և գործնական աշխատանքները նպատակաուղղել տեսական գիտելիքների ամրապնդմանը:
5. Լաբորատորիայում առկա հնարավորությունները լիաժեք օգտագործել ֆիզիկայի դասավանդման ընթացքում:
6. Դասի արդյունավետության բարձրացման և աշակերտների ընդգրկվածության մեծացման նպատակով կարևորել ՏՀՏ-ների կիրառումը դասապրոցեսում:

Լսեցին 4. 2023թ. բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Թոխունց)

Զեկուցողը նշվեց, որ բյուջեի նախագծի նախնական տարբերակով նախատեսված է դպրոցին հատկացնել.

- աշխատավարձ-116000,0 (մեկ հարյուր տասնվեց միլիոն) դրամ
- ծառայությունների ձեռքբերում- 18686,0 (տասնութ միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար) դրամ
- շենք. կապ. վերանորոգում-3000,0 (երեք միլիոն) դրամ
- ոչ նյ. հիմն. միջ.- 600,0 (վեց հարյուր հազար) դրամ
- նախագծահետ. ծախս- 150,0 (հարյուր հիսուն հազար) դրամ

Ընդամենը՝ 138436,0 (մեկ հարյուր երեսունութ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար) դրամ:

Արտահայտվեցին՝ Խորհրդի անդամներ

Մանկավարժական խորհրդի անդամները հավանություն տվեցին բյուջեի նախագծի նախնական տարբերակին:

Որոշեցին՝ Հավանություն տալ զեկուցողի կողմից ներկայացված 2023 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակին:

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ _____ Ա. Ջեյնալյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«05» հունվարի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
2. 3-9-րդ դասարաններում «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքի ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. Առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքները և երկրորդ կիսամյակի խնդիրները:
(զեկուցող՝ դասվար-դասղեկներ)
4. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պլանի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 3-9-րդ դասարաններում «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքի ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը նշեց, որ Օտար լեզուների մեթոդմիավորման նիստում, ինչպես նաև մանկավարժական խորհրդի նիստում հաստատվել էր 3-9-րդ դասարաններում «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրության մասին հարցը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Ֆրանսերեն» առարկայի դրվածքը դպրոցում բավարար հիմքերի վրա է: Դասալսումների արդյունքում պարզվեց, որ բոլոր աշակերտներն էլ սիրով մասնակցում են ֆրանսերենի դասերին: Ֆրանսերենի դասավանդման դժվարությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն ռուսաց լեզվի, ֆրանսերեն լեզվով աշակերտները չեն հաղորդակցվում դասապրոցեսի ընթացքում և հեռուստատեսությամբ կամ սոցիալական հարթակներում ֆրանսերեն խոսք չեն լսում: Ուստի ցանկալի է, որ դասապրոցեսի ընթացքում ուսուցիչ-աշակերտ հաղորդակցությունը իրականացվի բացառապես ֆրանսերեն լեզվով: Սա կնպաստի ֆրանսերեն լեզվի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ Լ. Բաղդասարյան, Ա. Հայրապետյան, Ս. Ավանեսյան
Լ. Բաղդասարյան - Անշուշտ, համամիտ եմ զեկուցման մեջ նշված նկատառումներին: Աշակերտները սիրով մասնակցում են դասերին: Տարաբնույթ մեթոդներ և հնարներ եմ կիրառում աշակերտների բանավոր և գրավոր խոսքի զարգացման համար:
Ա. Հայրապետյան - Ինչ խոսք, զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ուսումնասիրությունների ընթացքում արձանագրված արդյունքները: Միջին դասարաններում կան նաև ետ մնացող աշակերտներ, ովքեր մեծ

դժվարությամբ են հարմարվում օտար լեզվի հնչյունաբանությանը, դժվարությամբ են կարողանում բանավոր վերարտադրել կարդացած տեքստը, կազմել նախադասություններ, բայց հետևողական աշխատանքի արդյունքում հաղթահարում են դժվարությունները:

Ս. Ավանեսյան- Դասալսումների նախնական փուլում նկատվում էին մեթոդների կիրառման որոշակի բացթողումներ: Դասալսումների քննարկումների արդյունքում մեթոդմիավորման նախագահի և իմ կողմից ներկայացվեցին դիտարկումները, բացթողումները, մատնանշվեցին ճանապարհներ, որոնց միջոցով հնարավոր է լուծել առկա խնդիրները, բացթողումները: Հետագա դասալսումների ընթացքում պարզ դարձավ, որ դասալսումների ամփոփման ընթացքում իրականացվող քննարկումները, կիրառվող մեթոդներն արդյունավետ էին: Կիրառվող մեթոդները խթանում են դասերի որակի բարձրացմանը: Անհրաժեշտ է փորձի փոխանակման նպատակով իրականացնել փոխադարձ դասալսումներ, կիրառել մեթոդներ, որոնք կմեծացնեն հետաքրքրությունը ֆրանսերեն լեզվի նկատմամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 3-9-րդ դասարաններում «Ֆրանսերեն» առարկայի դասավանդման դրվածքի ամփոփման մասին տեղեկատվությունը, հանձնարարել ֆրանսերենի ուսուցչուհիներ Լուսինե Բաղդասարյանին և Անի Հայրապետյանին.

1. Բարձրացնել ֆրանսերենի դասի արդյունավետությունն ու որակը 3-9-րդ դասարաններում, կիրառել արդյունավետ մեթոդներ աշակերտների գրավոր ու բանավոր հաղորդակցման կարողությունները զարգացնելու նպատակով:
2. Դասապրոցեսում ապահովել սովորողների լիարժեք մասնակցությունը, ընգրկվածությունը:
3. Դասի պլանը կազմելիս ուշադրություն դարձնել դասի կառուցվածքին՝ կարևորելով չափորոշչային պահանջները:
4. Կարևորել փոխադարձ դասալսումները, կատարել արդյունավետ քննարկումներ:
5. «Ֆրանսերեն» առարկայի նկատմամբ մեծացնել սովորողի հետաքրքրասիրությունը՝ հաշվի առնելով նրա անհատական առանձնահատկությունները, ընդունակությունները:

Լսեցին 3. Առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների և երկրորդ կիսամյակի խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների և երկրորդ կիսամյակի խնդիրների մասին հարցերը, նշեց, որ ընդհանուր առմամբ իրականացվող աշխատանքները գոհացուցիչ են:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունց, Ա. Մարտիրոսյան , Ա. Գևորգյան, Ս. Ավանեսյան

Ռ. Շալունց - Տարրական դասարանների մեթոդմիավորումն իր առջև դրված խնդիրները պատրաստակամորեն կատարել է: Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում կարևոր է կրտսեր դպրոցի դերը: Կիսամյակի ընթացքում կատարել ենք փոխադարձ դասալսումներ և կատարել արդյունավետ քննարկումներ: Կազմակերպել ենք մի շարք միջոցառումներ:

Անժխտելի է, որ ունեցել ենք նաև բացթողումներ, որոնք պետք է լրացնենք հաջորդ կիսամյակի ընթացքում:

Ա. Մարտիրոսյան - Առաջին կիսամյակի արդյունքները ցույց են տալիս, որ մաթեմատիկայի ուսուցման մակարդակը բավարար հիմքերի վրա է: Երկրորդ կիսամյակի անելիքները շատ են: Անհրաժեշտ է կատարել հետևողական աշխատանք ավարտական քննություններին պատշաճ մասնակցություն և

բարձր արդյունքներ ապահովելու համար:

Ա. Գևորգյան - Պետք է նշեմ, որ առաջին կիսամյակում կատարված աշխատանքները կարելի է համարել բավարար: Կազմակերպվել են տարբնույթ միջոցառումներ, որոնց շնորհիվ ակտիվացել է դպրոցի մշակութային կյանքը, աշխուժացել ներդպրոցական առօրյան, աշակերտների մոտ զարգացել է ստեղծագործ միտքը: Պատշաճ կերպով կատարվել են դասղեկի ժամերը, հերթապահությունը: Արտադասարանական խմբակների գործունեությունը եղել է նպատակային: Առաջին կիսամյակի ընթացքում եղել են նաև բացթողումներ, որոնք կշտկվեն ուսուցիչների հետևողական և համառ աշխատանքի արդյունքում:

Ս. Ավանեսյան - Անհրաժեշտ եմ համարում նշել, որ առաջին կիսամյակի արդյունքները այնքան էլ գոհացուցիչ չեն: Աշակերտների՝ դասերին ընդգրկվածությունը մեծացնելու նպատակով անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում, մեծացնել մեթոդների բազմազանությունը, լինել խստապահանջ, անաչառ և սրտացավ: Ցածր առաջադիմություն և որակ գրանցած դասարաններում պետք է մեծացնել դասալսումների քանակը, աշակերտների առաջադիմությունը մեծացնելու նպատակով իրականացնել միջոցառումներ: Ավարտվել է առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլը: Պատրաստ է տարածքային փուլի մասնակիցների ցուցակը, աշակերտները ստացել են համապատասխան հանձնարարություններ, կատարվում են անհատական աշխատանքներ:

Որոշեցին՝ Հանձնարարել տնօրենությանը, մեթոդմիավորման նախագահներին, բոլոր ուսուցիչներին.

- 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպել՝ նկատի ունենալով զեկուցումներում և հարակից ելույթներում արտահայտած դիտողություններն ու առաջարկությունները:
- Կատարել հստակ քայլեր ցածր առաջադիմություն և որակ ունեցող դասարանների որակն ու առաջադիմությունը բարձրացնելու նպատակով: Կատարել դասալսումներ, հետևել աշակերտների պատրաստվածությանը, ուսուցիչներից պահանջել կատարել չափորոշչային պահանջները, ապահովել որակյալ կրթություն:
- Ամենօրյա հսկողություն սահմանել ուսուցչի աշխատանքի հանդեպ, պահանջել դասապրոցեսի ընթացքում ժամանակակից և ավանդական մեթոդների արդյունավետ համադրում և ՏՀՏ-ների կիրառություն:
- Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը ապահովել՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու կարողությունները:
- Ուսուցիչների և աշակերտների շրջանում վերահսկել ներքին կարգապահական կանոնների կատարողականությունը:
- Աշխուժացնել մեթոդմիավորումների գործունեությունը, արդյունավետ կազմակերպել փոխադարձ դասալսումները, քննարկումները, սկսնակ ուսուցիչների մեթոդամանկավարժական գործունեության ապահովումը:
- Էլեկտրոնային մատյաններում պատշաճ կերպով կատարել գնահատման և այլ տվյալների մուտքագրման աշխատանքները:

Լսեցին 4. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պլանի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա, ինչպես նաև 1-ին կիսամյակի ուսումնական պլանը հիմք է հանդիսացել տվյալ ուսումնական

տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը կազմելու համար: Դրանում առկա փոփոխությունները շատ չեն, մասնավորապես, փոփոխություն է կատարվում «Երաժշտություն», «Ազգային երգ ու պար», «Կերպարվեստ», «Հայոց պատմություն», «Քիմիա», «Հանրահաշիվ» առարկաների ժամաքանակների մեջ, այդ թվում՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հետ կապված:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասաբաշխումը՝ կատարելով հետևյալ փոփոխությունները.

5-րդ դասարան

- Երաժշտություն- 0 ժամ
- Ազգային երգ ու պար- 2 ժամ

6-րդ դասարան

- Կերպարվեստ- 1 ժամ
- Հայոց պատմություն - 2 ժամ
- Ազգային երգ ու պար- 1 ժամ
- Երաժշտություն- 0 ժամ

7-րդ դասարան

- Երաժշտություն- 0 ժամ
- Անգլերեն- 2 ժամ
- Կերպարվեստ- 1 ժամ
- Հայոց պատմություն- 1 ժամ
- Քիմիա- 2 ժամ
- Ազգային երգ ու պար- 2 ժամ

8-րդ դասարան

- Հայոց պատմություն- 2 ժամ
- Հանրահաշիվ- 3 ժամ

9-րդ դասարան

- Հայոց պատմություն- 2 ժամ
- Հանրահաշիվ- 3 ժամ

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ _____ Ա. Ջեյնալյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«17» մարտի 2023թ.Ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
2. «ՆԶՊ» առարկայի դրվածքը 8-րդ և 9-րդ դասարաններում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքը 2-9-րդ դասարաններում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
4. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
5. 1-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 8-րդ և 9-րդ դասարաններում «ՆԶՊ» առարկայի դրվածքի մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ հաջորդիվ ժամանակահատվածում կիրականացվի «ՆԶՊ» առարկայի դրվածքի ուսումնասիրություն, որը նպատակ ունի վեր հանել առարկայի դասավանդման հետ կապված խնդիրները և տալ դրանց լուծումները:

Արտահայտվեցին՝ Լ. Սարգսյանը, Ա. Հովսեփյանը, Ս. Հարությունյանը

Արտահայտվողները նշեցին, որ ռազմահայրենասիրական կրթության պատշաճ դաստիարակության համար կարևոր է «ՆԶՊ» առարկայի պատշաճ ուսուցման ապահովումը և առավել կարևոր է, որ վերոնշյալ առարկայի ուսուցումն իրականացվի առավելապես գործնական աշխատանքների զարգացման հիման վրա, որը կօգնի աշակերտների մոտ զարգացնել համապատասխան հմտություններ և կարողություններ:

Որոշեցին՝ Հաջորդիվ ժամանակահատվածում «ՆԶՊ» առարկայից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

Լսեցին 3. 2-9-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը կարևորեց 2-9-րդ դասարաններում դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնասիրությունը: Նշեց նաև, որ հիմնական

դպրոցներում առավել կարևոր նշանակություն ունեն այս առարկայից համապատասխան և պատշաճ գիտելիքներ ունենալը:

Արտահայտվեցին՝ Մ. Մկրտչյանը, Ա. Աբգարյանը, Ռ. Արզումանյանը

Արտահայտվողները նշեցին, որ և ֆիզիկական պատշաճ դաստիարակության համար կարևոր է «Ֆիզկուլտուրա» առարկայի պատշաճ ուսուցման ապահովումը և առավել կարևոր է, որ վերոնշյալ առարկայի ուսուցումն իրականացվի առավելապես գործնական աշխատանքների զարգացման հիման վրա, որը կօգնի աշակերտների մոտ զարգացնել համապատասխան հմտություններ և կարողություններ:

Որոշեցին՝ Հաջորդիվ ժամանակահատվածում «Ֆիզկուլտուրա» առարկայից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

Լսեցին 4. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») դրվածքի ուսումնասիրության մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայից («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») դրվածքի ուսումնասիրությունը նպատակ ունի վեր հանել «Մաթեմատիկա» դասավանդման ընթացքում ի հայտ եկած բացթողումները:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ «Մաթեմատիկա» առարկայից («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաների դրվածքի ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է կազմակերպել փոխադարձ դասալսումներ ոչ միայն բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների հետ, այլ ցանկալի է ընդգրկել նաև այլ մեթոդմիավորման ուսուցիչների:

Ս. Ավանեսյանը նշեց, որ մեծ ուշադրություն պետք է դարձնել դասապրոցեսի ժամանակ աշակերտների մասնակցությանը, և աշակերտների ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը, հավելելով, որ 9-րդ դասարանում աշակերտները պետք է հանձնեն քննություն «Մաթեմատիկա» առարկայից: Շեշտեց, որ նախորդ ուսումնական տարվա ավարտին նշյալ առարկայի կենտրոնացված քննության արդյունքներն այնքան էլ գոհացուցիչ չեն եղել, ուստի անհրաժեշտ է այս տարի ջանք գործադրել առարկայի ուսուցումն ավելի բարձրացնելու նպատակով:

Որոշեցին՝ Հաջորդիվ ժամանակահատվածում «Մաթեմատիկա» առարկայից («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկայից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

Լսեցին 5. 1-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց մեկամսյա դասալսումների արդյունքում կատարած դիտարկումները, ձեռքբերումները և թերի կողմերը: Ելույթի մեջ նշեց, որ բոլոր դասարաններում նկատելի էր աշակերտների ակտիվ մասնակցությունը: Ուսուցիչները բազաբնույթ մեթոդներով դասն ավելի կենդանի ու հագեցած դարձնելու հմտություններով կարողանում էին դասին մասնակից դարձնել բոլոր աշակերտներին: Դրվածքի վերլուծության արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են:

Արտահայտվեցին՝ Կ. Մալխասյանը, Գ. Ավագյանը, Ռ. Շալունցը, Ս. Ավանեսյանը

Կ. Մալխասյան - Անշուշտ, հանրակրթական դպրոցում մեծ է մաթեմատիկայի

դերը: Հիմնական խնդիր է համարվում սովորողների տրամաբանական և ալգորիթմական մտածողության զարգացումը, ինչը կօգնի հեշտությամբ յուրացնել յուրաքանչյուր առարկայի դասը:

Գ. Ավագյան - Դասարանում աշակերտների խտությունը բացասաբար է անդրադառնում կրթության որակի վրա: Կիրառելով տարբեր հնարներ ու մեթոդներ՝ փորձում եմ աշակերտների հետաքրքրությունը շարժել առարկայի հանդեպ, ձեռք բերած գիտելիքները դարձնել կայուն, զարգացնում ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ: Խիստ ուշադրություն եմ դարձնում խնդիրների լուծման գործընթացի արդյունավետ իրականացմանը՝ կարևորելով խնդիրների համառոտագրության այնպիսի տարբերակներ, ինչպիսիք են՝ մոդելավորումը, գծապատկերը, առարկայական լուսաբանումները:

Ռ. Շալունց - Մաթեմատիկա առարկայի դրվածքի ուսումնասիրության նպատակով իրականացրել ենք դասալսումներ և տնօրենության կողմից ստուգիչ գրավոր աշխատանքներ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարրական դասարաններում մաթեմատիկայից հանդիպում ենք բարձր առաջադիմության և որակի: Սովորողների մաթեմատիկական գիտելիքները համապատասխանում են չափորոշչային պահանջներին:

Ս. Ավանեսյան - Կատարված ուումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսուցիչներին հաջողվում է արդյունավետ դասեր վարել: Կան նաև բացթողումներ: Ուսուցիչները դասապրոցեսի ընթացքում կիրառում են հիմնականում ավանդական մեթոդներ: Որակի բարձրացնման համար առաջարկում եմ մեթոդմիավորման տարեկան աշխատանքային պլանը մշակելիս ուշադրություն դարձնել մաթեմատիկայի դասավանդմանն առնչվող խնդիրներին, դասապրոցեսում կիրառել համագործակցային ուսուցման արդյունավետ մեթոներ, մեծացնել ներդասարանական մրցույթների իրականացման հաճախականությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Մաթեմատիկա» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին ինֆորմացիան:

Լսեցին 6. 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Մ. Դանիելյանը Ս. Ավանեսյանը

Ա. Սարգիսջանյան - Համամիտ եմ զեկուցման մեջ նշված դիտողությունների հետ: Մայրենին 7-9-րդ դասարաններում բաժանվում է հայոց լեզվի և գրականության, ինչն էլ ավելի է մեծացնում ուսուցչի պատասխանատվությունը և հետևողական աշխատանք կատարելու անհրաժեշտությունը: Հայոց լեզվի իմացությամբ է պայմանավորված մյուս առարկաներից բարձր առաջադիմություն ունենալու հանգամանքը: Այս դասարաններում աշակերտները յուրացնում են քերականական և շարահյուսական գիտելիքներ, իրազեկվում գրականագիտական տեսական գիտելիքներից, ծանոթանում մեր հայ գրականության գոհարներին:

Մ. Դանիելյան - Զեկուցողը նշեց մասնախմբի կատարած աշխատանքները, վեր հանված թերություններն ու բացթողումները: «Հայոց լեզու», «Գրականություն» և «Պատմություն» առարկաները փոխշաղկապված են: Հայոց լեզու լավ իմացող աշակերտները լավ արդյունք են գրանցում նաև «Պատմություն» առարկայից: Դասի ընթացքում փորձում ենք միջառարկայական կապ ստեղծել գրականության հետ. կատարում ենք մեջբերումներ գրականությունից, իսկ պատմությունը նպաստում է, որպեսզի աշակերտներն ավելի լավ պատկերացնեն տվյալ ժամանակաշրջանը:

Ս. Ավանեսյան - Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ հայոց լեզվի և գրականության դրվածքը բավարար մակարդակի վրա է: 7-9-րդ դասարաններում հայոց լեզվի թեմաները բարդանում են, իսկ գրականությունը խորն ու ծավալուն ժամանակաշրջան է ընդգրկում, ուստի ուսուցիչը պետք է հմտորեն կիրառի զանազան մեթոդներ ու հնարներ դասն ավելի հասկանալի դարձնելու նպատակով: Կատարված դասալսումների արդյունքում պարզվել է, որ հայոց լեզվի և գրականության ուսուցումը բխում է առարկայական չափորոշչում և ծրագրերում ամրագրված նպատակներից ու խնդիրներից: Հատկանշական է, որ սովորողների մոտ զգալի է ընթերցասիրության պակասը: Ուստի անհրաժեշտ է սովորողների շրջանում խթանել կապը գեղարվեստական գրականության հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին ինֆորմացիան:

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«15» մայիսի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
2. 9-րդ դասարանների քննական առարկաներից գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
3. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում 120-200 դասաժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրումը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերի քննարկում, հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 9-րդ դասարանների աշակերտների ավարտական քննությունների հարցատոմսերի քննարկում, հաստատում:
(զեկուցող՝ դասվար-դասղեկներ)
6. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ներդրվելիք արտադասարանական խմբակների ծրագրերի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
9. 8-րդ և 9-րդ դասարաններում «ՆԶՊ» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
10. 2-9-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, Ռ. Շալունց)
11. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
12. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատել:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 9-րդ դասարանների քննական առարկաներից գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ դասարաններում քննական առարկաների որակի և առաջադիմության ստուգման նպատակով համապատասխան առարկաների ուսուցիչները կատարել են գրավոր աշխատանքների վերլուծություն, հաշվել դրանց որակն ու առաջադիմությունը, դրանք քննարկվել են մեթոդմիավորումների նիստերի ընթացքում: Այդ արդյունքների հիման վրա կատարվել է եզրակացություն, համաձայն որի՝ սովորողների՝ քննական առարկաներից ունեցած գիտելիքները բավարար մակարդակի վրա է:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ուսումնասիրելով քննական առարկաների գրավոր աշխատանքների արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ առաջին կիսամյակի համեմատ երկրորդ կիսամյակի ընթացքում բարձրացել է առաջադիմությունը և որակը: Արտահայտվողը ներկայացրեց նաև տեղեկանք՝ 2022-2023 ուսումնական տարվա գրավոր աշխատանքների որակի և առաջադիմության մասին (կցվում է):

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների քննական առարկաներից գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծությունը:

Լսեցին 3. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում 120-200 դասաժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվանից սկսած՝ 2-11-րդ դասարաններում էլեկտրոնային ենթահամակարգում բացված հայտերի արդյունքում սովորողների բաց թողած դասերի ժամաքանակը 120-200 ժամ լինելու դեպքում սովորողների բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են տվյալ ուսումնական տարվա երկու կիսամյակների ուսումնական նյութը ներառող լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով: Զեկուցողը, ներկայացնելով վերոնշյալ կարգը, կանգ առավ ուսումնական տարվա ընթացքում 120-200 դասաժամ դասերից բացակայած 2-րդից 9-րդ դասարանների բացակայությունների քանակի վրա՝ արձանագրելով, որ դպրոցում վերոնշյալ ժամաքանակով բացակայություններ ունի 8-րդ «Գ» դասարանի աշակերտ Արտակ Տիգրանի Աղաբեկյանը:

Արտահայտվեցին՝ Ա. Հայրապետյանը, Մ. Դանիելյանը, Մ. Պետրոսյանը, Ա. Դաջունցը

8-րդ «Գ» դասարանի դասղեկ Անի Հայրապետյանը նշեց, որ Արտակ Աղաբեկյանը ունի 162 դասաժամ բացակա:

Մասնախմբերի ղեկավարները նշեցին, որ սահմանված ժամկետում և կարգով կազմվել են 8-րդ դասարանի բոլոր առարկաների հարցաշարերը, հարցատոմսերը և քննարկվել մեթոդմիավորումների նիստերում, արժանացել հավանության:

Որոշեցին՝ 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը ընդունել ի գիտություն և 8-րդ «Գ» դասարանի աշակերտ Արտակ Տիգրանի Աղաբեկյանի բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշել տվյալ ուսումնական տարվա երկու կիսամյակների ուսումնական նյութը ներառող լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով:

Լսեցին 4. 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերի քննարկման, հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ «Մայրենի» առարկայի թեստը պարունակում է տասը առաջադրանք, յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր: Թեստի առավելագույն միավորը 15 է, թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե: «Մաթեմատիկա» առարկայի թեստը կազմված է տասնյոթ առաջադրանքից: 1-ից 15 առաջադրանքներին տրվում է 1 միավոր, 16-րդ առաջադրանքին՝ 2 միավոր, 17-րդ առաջադրանքին՝ 3 միավոր: Թեստի առավելագույն միավորը 20 է: Թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե: Զեկուցողը հավելեց, որ տարրական դասարանների մեթոդմիավորումը հիմք ընդունելով ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշները՝ կազմել է առնվազն չորս տարբերակ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Դ. Կոստանդյանը

Արտահայտվողները հավանություն տվին 4-րդ դասարանի աշակերտների «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից գիտելիքների ստուգման հարցատոմսերին:

Որոշեցին՝ Հաստատել 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերը (կցվում է):

Լսեցին 5. 9-րդ դասարանների աշակերտների ավարտական քննությունների հարցատոմսերի քննարկման, հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ դասվար-դասղեկներ)

Զեկուցողները նշեցին, որ 9-րդ դասարաններում կանցկացվեն բանավոր քննություններ «Գրականություն», «Օտար լեզու» («Ռուսաց լեզու», «Անգելերեն», «Ֆրանսերեն»), «Հայոց պատմություն» առարկաներից ԳԹԿ կայքից նախապես ստացված ցուցումների հիման վրա կազմված հարցատոմսերով, «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Բնագիտություն» («Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա») առարկաներից գրավոր քննություններ՝ ԳԹԿ-ից ստացված քննական թեստերով:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Մ. Պետրոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ ԳԹԿ կայքից նախապես ստացված ցուցումների հիման վրա կազմված հարցատոմսերը քննարկվել և հավանության են արժանացել ՄՄ նիստերում:

Որոշեցին՝ Հաստատել 9-րդ դասարանների աշակերտների ավարտական քննությունների հարցատոմսերը (կցվում է):

Լսեցին 6. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցը քննարկվել է Տարրական դասարանների, Օտար լեզուների, Բնագիտամաթեմատիկական առարկաների և Հումանիտար առարկաների մեթոդմիավորումների նիստերում և արժանացել է հավանության:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Մ. Պետրոսյանը, Ա. Դաջունցը, Ռ. Շալունցը

Արտահայտվողները նշեցին, որ 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցը կազմվել է հիմք ընդունելով ԳԹԿ-ի կողմից սահմանված ժամկետները,

մասնավորապես, 4-րդ դասարանի «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանի «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Բնագիտություն» («Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա») առարկաների քննությունների ժամկետները սահմանվել են ԳԹԿ-ի կողմից: Իսկ 9-րդ դասարանի «Գրականություն», «Օտար լեզու» («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն»), «Հայոց պատմություն» առարկաների քննությունների օրերը որոշվել են համապատասխան մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ հիմք ընդունելով տվյալ առարկաների ուսուցիչների առաջարկությունները:

Որոշեցին՝ Հաստատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցը (կցվում է):

Լսեցին 7. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Մ. Պետրոսյանը, Ա. Դաջունցը, Ռ. Շալունցը

Արտահայտվողները նշեցին, որ 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը քննարկվել և հավանության են արժանացել ՄՄ նիստերի ժամանակ:

Որոշեցին՝

1. Գիտելիքների ստուգումը կազմակերպելու համար տնօրենի կողմից ներկայացուցիչներ նշանակել տնօրեն Դավիթ Կոստանդյանին, փոխտնօրեններ Սերգեյ Ավանեսյանին ու Արմիդա Գևորգյանին:
2. Հաստատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը (կցվում է):

Լսեցին 8. 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ներդրվելիք արտադասարանական խմբակների ծրագրերի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի առաջարկությամբ 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում արդեն իսկ խմբակներն իրականացվել են դրանց համար կազմված ծրագրերով, հավելեց, որ 2022-2023 ուսումնական տարվա համար ուսուցիչների կողմից կազմվել, հաստատվել են խմբակների ծրագրերը, որոնք ուղարկվել են ԿԳՄՍ՝ երաշխավորության: Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ներդնելու նպատակով ուսուցիչների կողմից կազմվել են արտադասարանական խմբակների նոր ծրագրեր, որոնց քննարկվել են համապատասխան ցիկլային հանձնաժողովներում, արժանացել են հավանության: Այդ ծրագրերն են՝ «Ընթերցանություն և ասմունք», «Խոսքի զարգացում», «Հեքիաթների աշխարհում», «Հայ կինո», «Վարսավիրություն», «Հմուռ ձեռքեր»,

«Տեղեկատվության անվտանգություն և մեդիագրագիտություն», «Թատրոն», «Անգլերեն»:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ ներկայացված բոլոր ծրագրերը քննարկվել են առարկայական մասնախմբերում և այդ քննարկումների ընթացքում ուշադրություն է դարձվել դրանց համապատասխանությանը հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգին:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել ներկայացված արտադասարանական խմբակների ծրագրերը և ուղարկել ԿԳՄՍ նախարարություն՝ երաշխավորության նպատակով (կցվում է):

Լսեցին՝9. 8-րդ և 9-րդ դասարաններում «ՆԶՊ» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ դասալսումներ են իրականացվել «ՆԶՊ» առարկայից: Աշակերտները մեծ հետաքրքրությամբ և սիրով էին մասնակցում դասերին և ապահովում էին անհրաժեշտ գիտելիքների իմացությունը: Դասալսումների ավարտին կազմակերպվել է ութերորդ դասարանների միջև դաս-միջոցառում, որի ընթացքում աշակերտները ցուցադրել են հրաձգությունից ունեցած գիտելիքները:

Զեկուցողը նշեց, որ այս ընթացքում իրականացված բոլոր դասալսումներից հետո դասվող մասնագետի հետ դասալսողները քննարկել են արդյունքները և դրանց հիման վրա կազմվելեն արձանագրություններ, ինչպես նաև իրականացվածդասերն աշակերտակենտրոն էին:

Արտահայտվեցին՝ Ռ. Արզումանյանը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները կարևորեցին «ՆԶՊ» առարկայի դասավանդումը և դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակությունն ու կրթության զարգացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 8-րդ և 9-րդ դասարաններում «ՆԶՊ» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին զեկուցումը:

Լսեցին՝10. 2-9-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, Ռ. Շալունց)

Զեկուցողները նշեցին, որ դասալսումներ իրականացվել են ամբողջ ամսվա ընթացքում: Ֆիզկուլտուրա առարկան դպրոցում դասավանդվում է ըստ չափորոշչային պահանջների: Դասալսումների և կազմակերպված բաց դասերի ընթացքում տեսանելի էին աշակերտների ունեցած գիտելիքները «Ֆիզկուլտուրա» առարկայից: Նրանք տիրապետում էին խաղային կանոններին, նորմատիվային պահանջներին: Այս ամենի վկայությունը դպրոցի ունեցած հաջողություններն են տարբեր մրցումների, սպորտլանդիաների մասնակցության ժամանակ, հաղթանակներ ունեցանք ոչ միայն մեր մարզում, այլ նաև մյուս մարզերում տարբեր մարզական միջոցառումների մասնակցության ընթացքում:

Զեկուցողը նշեց, որ այս ընթացքում իրականացված բոլոր դասալսումներից հետո դասվող մասնագետի հետ դասալսողները քննարկել են արդյունքները և դրանց հիման վրա կազմվելեն արձանագրություններ, ինչպես նաև իրականացվածդասերն աշակերտակենտրոն էին:

Արտահայտվեցին՝ Ա. Հովսեփյանը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները կարևորեցին «Ֆիզկուլտուրա» առարկայի

դասավանդումը և աշակերտների մասնակցությունը համայնքային, մարզային և միջմարզային միջոցառումներին ու մրցաշարերին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2-9-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին զեկուցումը։

Լսեցին՝11. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց մեկամսյա դասալսումների արդյունքում կատարած դիտարկումները, ձեռքբերումները և թերի կողմերը։ Ելույթի մեջ նշեց, որ բոլոր դասարաններում նկատելի էր աշակերտների ակտիվ մասնակցությունը։ Ուսուցիչները բազաբնույթ մեթոդներով դասն ավելի կենդանի ու հագեցած դարձնելու հմտություններով կարողանում էին դասին մասնակից դարձնել բոլոր աշակերտներին։ Դրվածքի վերլուծության արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են։

Արտահայտվեցին՝ Ա. Մարտիրոսյանը, Սիրուշ Բաղդասարյանը, Ա. Զեյնալյանը

Արտահայտվողները նշեցին, որ կատարված վերլուծությունները, քննարկումները և դիտարկումները արդյունավետ էին այնքանով, որ հաջորդ դասալսումների ժամանակ նկատված վրիպումներն ու թերությունները մեծամասամբ ուղղված էին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին զեկուցումը։

Լսեցին՝12. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Ա» դասարանի աշակերտ Վահե Մինասյանի և 9-րդ «Բ» դասարանի աշակերտուհի Եվա Զադայանի ծնողները դիմումներ են ներկայացրել, որոնցով խնդրել են երեխաներին ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ Վահե Մինասյանի և Եվա Զադայանի ծնողների դիմումի համաձայան վերոնշյալ աշակերտներին պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12րդ դասարան) քննություններին։ Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների։

Որոշեցին՝ Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների

կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ 9-րդ դասարանների ԿԱՊԿՈՒ ներքոնշյալ աշակերտներին՝ Վահե Մինասյանին և Եվա Զադայանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից։

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

«26» մայիսի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
2. 1-3-րդ, 5-8-րդ դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու, գովասանագրով պարգևատրելու մասին:
(զեկուցողներ՝ դասվարներ, դասղեկներ, ՄՄ նախագահներ)
3. 4-րդ դասարանի աշակերտներին թույլատրել մասնակցել գիտելիքների ստուգմանը:
(զեկուցող՝ դասվար-դասղեկներ)
4. 9-րդ դասարանների աշակերտներին թույլատրել մասնակցել ավարտական քննություններին:
(զեկուցող՝ դասվար-դասղեկներ)
5. Ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի Հերմինե Ալավերդյանի կողմից գիտական հոդվածների հրապարակում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, Հ. Ալավերդյան)
6. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրենց աշխատանքային պարտականությունները պատշաճ իրականացրած աշխատողների պարգևատրում՝ ամսական աշխատավարձի 100 տոկոսի չափով:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
7. ԿԶՆԱԿ-ի կողմից դպրոցն ընտրվել է որպես մենթոր դպրոց, իրականացրել վերապատրաստումներ:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 1-3-րդ, 5-8-րդ դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու, գովասանագրով պարգևատրելու մասին հարցը:
(զեկուցողներ՝ դասվարներ, դասղեկներ, ՄՄ նախագահներ)
Զեկուցողները ներկայացրին 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական հաստատության սովորողների՝ 1-3-րդ, 5-8-րդ դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու կարգը, նշեցին 2-3-րդ, 5-8-րդ դասարանների աշակերտների անունները՝ ըստ դասարանների, որոնք կպարգևատրվեն գովասանագրով:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամներ
Արտահայտվողները նշեցին, որ ամեն հաջորդ ուսումնական տարի բարելավվում է դպրոցի ուսուցման որակը, ինչի արդյունքում ավելանում է գերազանցիկների ընդհանուր թիվը: 2022-2023 ուսումնական տարին այս առումով բացառություն չէ: Այս ուսումնական տարվա ընթացքում դպրոցն ունի 176 գերազանցությամբ ուսումն ավարտած աշակերտ, և այդ թվի մեջ

ներառված չեն 4-րդ և 9-րդ դասարանների աշակերտները։

Որոշեցին՝

1. Առաջին դասարաններում սովորողների գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը ձեռք բերած 80 (ութսուն) աշակերտներին փոխադրել երկրորդ դասարան (առաջին դասարանների աշակերտների թիվը՝ 80)։
2. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ դասարանների՝ ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողներին փոխադրել հաջորդ դասարաններ.
   - 2-րդ դասարանների 87 (ութսունյոթ) աշակերտներից 87 (ութսունյոթ) աշակերտներին փոխադրել 3-րդ դասարաններ,
   - 3-րդ դասարանների 72 (յոթանասուներկու) աշակերտներից 72 (յոթանասուներկու) աշակերտներին փոխադրել 4-րդ դասարաններ,
   - 5-րդ դասարանների 86 (ութսունվեց) աշակերտներից 86 (ութսունվեց) աշակերտներին փոխադրել 6-րդ դասարաններ,
   - 6-րդ դասարանների 65 (վաթսունհինգ) աշակերտներից 65 (վաթսունհինգ) աշակերտներին փոխադրել 7-րդ դասարաններ,
   - 7-րդ դասարանների 61 (վաթսունմեկ) աշակերտներից 61 (վաթսունմեկ) աշակերտներին փոխադրել 8-րդ դասարաններ,
   - 8-րդ դասարանների 70 (յոթանասուն) աշակերտներից 70 (յոթանասուն) աշակերտներին փոխադրել 9-րդ դասարաններ։
3. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ դասարանների ներքոնշյալ աշակերտներին, որոնք ուսումնական բոլոր առարկաներից ունեն 9-10 միավոր, պարգևատրել ՀՀԿԳՄՍ նախարարության գովասանագրով (կցվում է)։

Լսեցին 3. 4-րդ դասարանի աշակերտներին գիտելիքների ստուգմանը մասնակցելու թույլտվության մասին հարցը։

(զեկուցող՝ դասվար-դաստղեկներ)

Զեկուցողները նշեցին, որ 4-րդ դասարանների բոլոր աշակերտներն ունեն 4-10 գնահատականներ։ Հավելեց, որ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի համաձայն բոլոր այն աշակերտները, որոնք ուսումնասիրած բոլոր առարկաներից ունեն դրական գնահատականներ, կարող են մասնակցել գիտելիքների ստուգմանը։

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունց

Արտահայտվողը նշեց, որ ուսումնասիրելով 4-րդ դասարանների բոլոր աշակերտների տարեկան գնահատականները՝ կարող ենք եզրակացնել, որ աշակերտների՝ տարրական դասարաններում ձեռք բերած գիտելիքները համարժեք են հանրակրթական պետական չափորոշչի տարրական կրթական աստիճանի պահանջներին։ Հավելեց՝ բոլոր աշակերտները կարող են մասնակցել գիտելիքների ամփոփիչ ստուգմանը։

Որոշեցին՝ Հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը՝ 4-րդ դասարանների բոլոր ուսումնական առարկաներից 4-10 միավոր գնահատված 71 (յոթանասունմեկ) աշակերտներին թույլատրել մասնակցել 2022-2023 ուսումնական տարվա գիտելիքների ստուգմանը։

Լսեցին 4. 9-րդ դասարանների աշակերտներին ավարտական քննություններին

մասնակցելու թույլտվության մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Մկրտչյան, Ա. Մարտիրոսյան)

Զեկուցողները նշեցին, որ 9-րդ դասարանների աշակերտները, բացառությամբ ԿԱՊԿՈՒ աշակերտներ Վահե Մինասյանի և Եվա Զաղայանի, պատրաստ են մասնակցել ավարտական քննություններին։ 9-րդ «Ա» և «Բ» դասարանների 64 (վաթսունչորս) աշակերտները հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջներին համաձայն ուսումնական առարկաներից ունեն 4-10 միավոր գնահատականներ։

Արտահայտվեցին՝ Ա. Դաջունց, Մ. Պետրոսյան, Մ. Դանիելյան

Արտահայտվողները նշեցին, որ վերջին մեկ ամսվա ընթացքում իրականացված դասալսումների, դիտարկումների հիման վրա կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 9-րդ դասարաններում քննական առարկաների կրկնության ժամերը արդյունավետ էին և հնարավորություն են տվել աշակերտներին կրկնել քննական առարկաների ամբողջ դասընթացը։

Որոշեցին՝ Հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը՝ 9-րդ դասարանների բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված 64 (վաթսունչորս) աշակերտներին թույլատրել մասնակցել ավարտական քննություններին, բացառությամբ՝ 9-րդ դասարանների ԿԱՊԿՈՒ ներքոնշյալ աշակերտների՝ Մինասյան Վահե (9-րդ «Ա» դասարան), Զաղայան Եվա (9-րդ «Բ» դասարան)՝ հիմք ընդունելով ծնողների դիմումները, ինչպես նաև վերոնշյալ կարգը։

Լսեցին 5. Ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի Հերմինե Ալավերդյանի կողմից գիտական հոդվածների հրապարակման մասին հարցը։

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Հ. Ալավերդյան)

Զեկուցողները նշեցին, որ միջազգային գիտական հանդեսներում լույս է տեսել Սերգեյ Ավանեսյանի և Հերմինե Ալավերդյանի կոլեկտիվ մենագրությունը՝ «Որակի ապահովման հիմնախնդիրը կրթության մեջ», իսկ ավելի վաղ «Կրթական միջավայրի ախտորոշման մի քանի ասպեկտների շուրջ» (О НЕКОТОРЫХ АСПЕКТАХ ДИАГНОСТИКИ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СРЕДЫ) վերնագրով նրանց համատեղ հոդվածը։ Զեկուցող Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ Հայաստանում մինչև այս պահը կոլեկտիվ մենագրություն չի իրականացվել, ինչի պատճառով բացակայում է նաև ուսուցիչներին տվյալ և կամ նմանատիպ աշխատանքների համար միավորների տրամադրումը։

Զեկուցող Հերմինե Ալավերդյանը նշեց, որ «Որակի ապահովման հիմնախնդիրը կրթության մեջ» հոդվածում առաջ են քաշվել մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկման մանկավարժական համակարգի մշակման ու ներդրման հետ կապված հիմնահարցերը, իսկ «Կրթական միջավայրի ախտորոշման մի քանի ասպեկտների շուրջ» հոդվածում՝ մանկավարժական դիագնոստիկայի՝ որպես տեսական-կիրառական բնագավառի մի քանի ասպեկտները, կրթական միջավայրի և դրանում առկա խնդիրների բացահայտման ու ախտորոշման հիմնախնդիրները։

Արտահայտվեցին՝ Դ. Կոստանդյանը

Դավիթ Կոստանդյանը շնորհավորեց ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանին և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի Հերմինե Ալավերդյանին՝ գիտական հոդվածների հրապարակման առիթով և մաղթեց հոդվածների հրապարակման շարունակականություն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի և «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի Հերմինե Ալավերդյանի կողմից գիտական հոդվածների հրապարակման մասին զեկույցը:

Լսեցին՝6. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրենց աշխատանքային պարտականությունները պատշաճ իրականացրած աշխատողների՝ ամսական աշխատավարձի 100 տոկոսի չափով պարգևատրման մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրենց աշխատանքային պարտականությունները պատշաճ իրականացրել են դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը և հաշվապահ Մայրանուշ Թոխունցը: Սերգեյ Ավանեսյանի և Մայրանուշ Թոխունցի առաջարկներով դպրոցում իրականացվել են մի շարք փոփոխություններ, այդ թվում՝ անհրաժեշտ կանոնակարգերի, թղթերի ձևանմուշների մշակում, կրթության որակի բարձրացմանն ուղղված գործնական քայլեր՝ տնօրենության գրավորների կոդավորում, մնացորդային գիտելիքների ստուգում, արտադասարանական խմբակների համար նախատեսված ծրագրերի մշակում, օրվա դասի պլանների ներդրում և այլն: Զեկուցողը նշեց, որ Մայրանուշ Թոխունցը, լինելով հմուտ հաշվապահ և ունենալով տարիների փորձ, ապահովում է դպրոցի ֆինանսական կայունությունը:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամներ

Արտահայտվողները ողջունեցին տնօրեն Դավիթ Կոստանդյանի առաջարկը՝ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի և հաշվապահ Մայրանուշ Թոխունցի պարգևատրման որոշումը:

Որոշեցին՝ Հավանություն տալ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրենց աշխատանքային պարտականությունները պատշաճ իրականացրած աշխատողներ Սերգեյ Ավանեսյանի և Մայրանուշ Թոխունցի՝ ամսական աշխատավարձի 100 տոկոսի չափով պարգևատրելու մասին հարցին և առաջարկեցին հարցը քննարկել դպրոցի կառավարման խորհրդում:

Լսեցին՝7. ԿԶՆԱԿ-ի կողմից դպրոցին մենթոր դպրոցի կարգավիճակ շնորհելու, վերապատրաստումներ իրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ 2023 թվականին ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացված վերապատրաստումների արդյունքում դպրոցին շնորհվել է մենթոր դպրոցի կարգավիճակ, իսկ աշխատակիցներ Ռիտա Շալունցը, Ռուզաննա Խաչատրյանն ու Դավիթ Կոստանդյանը՝ մենթոր ուսուցիչներ:

Զեկուցողը հավելեց, որ ապրիլ-մայիս ամիսներին դպրոցում իրականացվել և իրականացվում են «Հանրապետության հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերին համապատասխան տնօրենների, փոխտնօրենների ու ուսուցիչների վերապատրաստում և մենթորների կողմից աջակցության իրականացում» թեմայով վերապատրաստումներ, որոնց մասնակցում են Գորիսի տարածաշրջանի 15 դպրոցների 310 տնօրեններ, փոխտնօրեններ և ուսուցիչներ:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամներ

Արտահայտվողները ողջունեցին Դավիթ Կոստանդյանի զեկուցումը, նշեցին,

որ դպրոցին մենթոր դպրոցի կարգավիճակի շնորհումն ու ուսուցիչների կողմից արդեն իսկ իրականացված աշխատանքները հեռանկարային են։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԶՆԱԿ-ի կողմից դպրոցին մենթոր դպրոցի կարգավիճակ շնորհելու, վերապատրաստումներ իրականացնելու մասին զեկույցը

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

«26» հունիսի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
2. 2022-2023 ուսումնական տարվա 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքները, 4-րդ դասարանցիներին հավաստագիր տալու, գովասանագով պարգևատրելու մասին:
(զեկուցողներ՝ դասվարներ)
3. 2022-2023 ուումնական տարվա 9-րդ դասաանների ավարտական քննությունների արդյունքները, 9-րդ դասարանների շրջանավարտներին հասարակ և հատուկ նմուշի վկայականներ տալու մասին:
(զեկուցողներ՝ դասղեկներ)
4. Մանկավարժական խորհրդի անդամների հաշվետվությունների ներկայացում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2022-2023 ուսումնական տարվա 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքները, 4-րդ դասարանցիներին հավաստագիր տալու, գովասանագով պարգևատրելու մասին հարցը:
(զեկուցողներ՝ դասվարներ)

Արտահայտվեցին՝ Զեկուցողները ներկայացրին 2022-2023 ուսումնական տարվա 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքները, 4-րդ դասարանը գերազանցությամբ ավարտած աշակերտների անունները:
Ս. Ավանեսյան
Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ 4-րդ դասարանների տարեկան գնահատականները, ինչպես նաև 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են:

Որոշեցին՝
1. 2022-2023 ուսումնական տարվա 4-րդ դասարանների ներքոնշյալ 71 (յոթանասունմեկ) աշակերտներին, որոնք ուսումնական առարկաներից տարեկան «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների գիտելիքների ստուգումից ունեն 4-10 միավոր գնահատված գնահատականներ, տալ հավաստագրեր և փոխադրեել 5-րդ դասարաններ (կցվում է):
2. Ուսումնական բոլոր առարկաներից տարեկան, «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների գիտելիքների ստուգումից 9-10 միավոր գնահատված ներքոնշյալ սովորողներին պարգևատրել ՀՀ ԿԳՄՍ նախարարության գովասանագրով (կցվում է):

Լսեցին 3. 2022-2023 ուումնական տարվա 9-րդ դասաանների ավարտական

քննությունների արդյունքները, 9-րդ դասարանների շրջանավարտներին հասարակ և հատուկ նմուշի վկայականներ տալու մասին հարցը:

(զեկուցողներ՝ դասղեկներ)

Զեկուցողները նշեցին, որ 2022-2023 ուսումնական տարում 9-րդ դասարանների բոլոր աշակերտները ուսումնական բոլոր առարկաներից ունեն 4-10 տարեկան գնահատականներ, իսկ ավարտական բոլոր քննություններից 9-րդ դասարանների բոլոր աշակերտները, բացառությամբ ԿԱՊԿՈՒ աշակերտների, ունեն 8-20 միավոր գնահատված գնահատականներ: Զեկուցողները նշեցին նաև, որ 8-րդ և 9-րդ դասարաններում բոլոր առարկաներից տարեկան 9-10 միավոր և 9-րդ դասարանների ավարտական քննություններից 18-20 միավոր ունեն 11 աշակերտ:

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյան, Ա. Դաջունց, Մ. Դանիելյան, Ս. Ավանեսյան

Արտահայտվողները նշեցին, որ 2022-2023 ուումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքները վկայում են, որ ուսումնական տարին բարեհաջող էր 9-րդ դասարանների աշակերտների համար:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, Վահե Մինասյանի և Եվա Զաղայանի ծնողների դիմումի համաձայան վերոնշյալ աշակերտներն ազատվել են 9-րդ դասարանների ավարտական քննություններից, ինչի համար հիմք է հանդիսացել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետը, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12դ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

Որոշեցին՝

1. 2022-2023 ուսումնական տարվա 9-րդ դասարանների 53 (հիսուներեք) աշակերտներին, որոնք ուսումնական բոլոր առարկաներից ունեն 4-10 և ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված գնահատականներ, տալ հիմնական կրթության սովորական նմուշի վկայականներ (կցվում է):
2. 2022-2023 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ներքոնշյալ 11 (տասնմեկ) աշակերտներին, որոնք 8-րդ և 9-րդ դասարաննեների ուումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից ունեն տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված գնահատականներ, տալ հատուկ նմուշի (գերազանցության նշումով) հիմնական կրթության վկայականներ.

9-րդ «Ա» դասարան

- Աբալյան Մարիանա Ղարիբի
- Բալասյան Կարինա Արմենի
- Գրիգորյան Լիլյա Մարատի
- Ջավահիրյան Էրիկա Էրիկի

9-րդ «Բ» դասարան

- Բակունց Անահիտ Սուրենի
- Գրիգորյան Հայրապետ Գրիգորի

- Գրիգորյան Մարի Գրիշայի
- Կարապետյան Սոնա Զոհրաբի
- Հայրապետյան Լիլի Արտակի
- Հարությունյան Սիլվի Վահրամի
- Մարգարյան Ջուլիա Անդրանիկի

Լսեցին 4. Մանկավարժական խորհրդի անդամների հաշվետվությունների ներկայացման մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ սահմանված կարգի համաձայն՝ մանկավարժական խորհրդի բոլոր անդամները, պետք է ներկայացնեն 2022-2023 ուսումնական տարվա հաշվետվությունները:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ հիմք ընդունելով աշխատանքային պլանները և հաշվի առնելով 2022-2023 ուսումնական տարվվա ընթացքում կատարած աշխատանքները՝ կազմել են տարեկան հաշվետվությունները:

Բոլոր ուսումնական ստորաբաժանումների ղեկավարները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժները ներկայացրին իրենց հաշվետվությունները, որոնք քննարկվեցին և հավանության արժանացան:

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի անդամների 2022-2023 ուսումնական տարվա հաշվետվությունները:

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Մանկավարժական խորհրդի արձանագրությունների ամփոփման

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում *Մանկավարժական խորհուրդը* գումարել է *8 նիստ*, որոնց համար կազմվել է 8 *արձանագրություն:*

Մանկավարժական խորհուրդը նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	31.08.2022	12
2	2	05.09.2022	3
3	2	07.11.2022	4
4	3	05.01.2023	4
5	4	17.03.2023	6
6	5	15.05.2023	12
7	6	26.05.2023	7
8	7	26.06.2023	4

Մանկավարժական խորհուրդի սույն արձանագրությունների մատյանը կազմված է *38* էջից։

Խորհրդի նախագահ՝ _____ Դ. Կոստանդյան

Քարտուղար՝ _____ Ա. Ջեյնալյան

«26» հունիսի 2023թ.